ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորապատ գյուղական համայնքի ղեկավարի 2011 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարած աշխատանքների մասին:

Հաշվետու ժողովը տեղի է ունեցել 2011 թվականի հուլիսի 12-ին ժամը 15.00-ին համայնքի կուլտուրայի տան դահլիճում:
Ժողովին մասնակցում են ավագանու անդամներ,համայնքապետարանի աշխատակազմը,դպրոցի ուսուցիչներ,մանկապարտեզի կոլեկտիվի անդամներ,համայնքի բնակիչներ և Արմավիրի մարզպետարանի ներկայացուցիչ պ-ն՝ Գոռ Հովհաննիսյանը:
Զեկուցումով հանդես եկավ համայնքի ղեկավար՝ Ս.Բաղալյանը, որն իր աշխատանքները կազմակերպում է իրեն սահմանված լիազորությունների շրջանակներում:
Հաշվետու ժամանակահատվածում հրավիրվել են վեց ավագանու նիստեր,որոնցում քննարկվել են համայնքին վերաբերվող մի շարք հարցեր և դրանց վերաբերյալ ընդունվել համապատասխան որոշումներ: Ընդունված որոշումների կատարման մասին իրազեկվել էհամայնքի ազգաբնակչությանը:
Առաջին կիսմյակի ընթացքում համայնքի ղեկավարին տարբեր հարցերով դիմել են շուրջ 50 քաղաքացիներ,որոնց պահանջներինտրվել են համապատասխան լուծումներ: 312 քաղաքացիների տրվել է տարբեր բնույթի տեղեկանքներ, 3-ին՝ շինարարության թույլտվության իրավունք:
Մեկով ավելացել է առևտրի օբյեկտների թիվը,որին տրվել է ծխախոտի և ոգելից խմիչքների վաճառքի թույլտվություն:

Գյուղատնտեսության բնագավառ

2011 թվականի առաջի կսամյակին առանձնակի ուշադրություն է դարձվել գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման, բարձր բերքի ապահովման ուղղությամբ:
Համայնքին մեծ վնասներ հասցրած կարկուտի հետևանքները

հատուցելու նպատակով ՀՀ կառավարության կողմից տրամադրվեց 300լիտր անվճար դիզելային վառելանյութ,որն էլ օգտագործվեց նպատակային:

Ժամանակին է կազմակերպվել ջրատարների վերանորոգումը, խորքային հորերի շահագործումը: Միայն պոմպերի վերանորոգման համար ծախսվել է շուրջ 450.0 հազար դրամ: Աճեցված բերքը դաշտերից անկորուստ դուրս բերելու համար շուրջ 2 կմ-ի վրա կատարվել է ավազապատման աշխատանքներ: 120 հա խաղողի, պտղատու այգիների և բազմամյա խոտաբույսերի ցանքատարածությունների վրա կազմակերպվել է կրծողների դեմ քիմիական պայքար: Թունաքիմիկատների անվճար տրամադրումը կազմակերպել էր ՀՀ կառավարության կողմից, որը կնպաստի գյուղ մթերքների ավելացմանը:

Կենցաղ սպասարկման բնագավառ

Բնակչության կենցաղային հարցերը եղել և մնում են համայնքի ղեկավարի ամենօրյա ուշադրության կենտրոնում:

Համայնքի տարածքում կատարվում է կանոնավոր աղբահանություն ,շաբաթը երկու օր բնակավայրից դուրս է բերվում կուտակված աղբը և տեղափոխվում քաղաքային աղբակայան: Աշխատանքներ են տարվում համայնքի նորաստեղծ թաղամասերում էլ.էներգիա անցկացնելու և գազաֆիկացնելու ուղղությամբ: Համայնքում խմելու ջրի մատակարարումը 24 –ժամյա դարձնելու համար իրականացվում են մի շարք միջոցառումներ:

Մշակույթ և սպորտի բնագավառ

Համայնքապետարանը կուլտուրայի տան և դպրոցի կոլեկտիվի հետ կազմակերպում է մի շարք միջոցառումներ՝ տրամադրելով նաև որոշակի դրամական օգնություն:

Շախմատի մարզային առջնությունում Ա.Մուրադյանը գրավելով մրցանակային տեղ ՝ մասնակցեց Ջերմուկ քաղաքում անցկացվող Հանրապետական առաջնությանը:

Ավագանու որոշմամբ դպրոցին է նվիրաբերվել 561.0 հազար դրամի գույք:
Համայնքապետարանը իր մշտական աջակցությունն է ցուցաբերում մանկապարտեզում կազմակերվեպելիք միջոցառումներին:

Սոցիալական բնագավառ

Համայնքապետարանը իր ամենօրյա ուշադրության կենտրոնում է պահում սոցիալապես անապահով ընտանիքներին օգնություն ցուցաբերելու,նրանց դիմումներին ընթացք տալու գործընթացը:
Սոցիալապես անապահով ընտանիքները ընդգրկված են նպաստառուների ցուցակում:
Ավագանու որոշմամբ երկու բնակիչներ ազատվել են ավտոմեքենայի գույքահարկից:

Համայնքային բյուջեյի իրագործում

Բյուջեյի կատարման գործընթացը մշտապես եղել է համայնքի ղեկավարի առաջնահերթ ուշադրության կենտրոնում:
2011 թվականի առաջին կիսամյակի ընթացքում հավաքագրվել է հողի հարկ՝ 1441,6 հազար դրամ – 56,7տոկոսով,գույքահարկ՝ 300,0 հազար դրամ:
Համայնքապետարանը աշխատավարձի ,սոցվճարումների և այլ ծառայությունների հետ կապված վճարումները կատարում է ժամանակին: Աշխատակիցները սահմանված կարգով օգտվում են իրենց սահմանված արձակուրդներից:

Համայնքի հիմնախնդրիները

1. Ոռոգման ջրի ինքնահոս մատակարարում
2. Մանկապարտեզի շենքի նորոգում
3. Մշակույթի տան շենքի նորոգում

4. Մրգաշատ տանող ճանապարհի նորոգում
5. Ամբողջ գյուղում գիշերային լուսավորության անցկացում:

Նորապատ համայնքի ազգաբնակչությունը համայնքապետ՝ Ս.Բաղալյանի գլխավորությամբ իրենց խորին շնորհակալությունն են հայտնում մարզպետ պարոն՝ Ա.Ղահրամանյանին դպրոցի վերանորոգման գործընթացին աջակցելու համար և լի են վճռականությամբ համայնքի առջև ծառացած խնդիրները կյանքի կոչելու ուղղությամբ:

Նորապատ գյուղական համայնքի ղեկավար Ս.Բաղալյան